

**«ԴԵԿԱԿԱ ՖՈՆԴ»
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ**

**Ֆինանսական Հաշվետվություններ և
Անկախ Աուդիտորական Եզրակացություն**

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
հաշվեկալված տարվա

**ԵՐԵՎԱՆ
Ապրիլ 2025թ.**

Բովանդակություն

	էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Դէկավվա» բարեգործական հիմնադրամի 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեփակված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«Դէկավվա» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Դէկավվա» բարեգործական հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքն ու դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը:

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու

կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցրած, գերծ են խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության սկզբունքի կիրառումը:

- գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և արդյոք ֆինանսական

հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձություններն այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

30 ապրիլի 2025թ.

«ԱՈՒԴԻՏ ՊՐՈ» ՓԲԸ

Արսեն Խաչատրյան

Տնօրեն/Աուդիտի ղեկավար



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԴԵԿԱՎԱ ՖՈՆԴ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթ.	31.12.2024թ. հազար դրամ	31.12.2023թ. հազար դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	4,259	-
Ոչ նյութական ակտիվներ	5	2,627	-
		6,886	-
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	6	204	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	304	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	18,742	-
		19,250	-
		26,136	-
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ			
Կուտակված արդյունք		23,642	-
		23,642	-
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
		-	-
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	9	2,132	-
Այլ պարտավորություններ	10	362	-
		2,494	-
		26,136	-

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել է Հիմնադրամի ղեկավարության կողմից 2025թ. մարտի 3-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների քաղկացուցիչ մասը:

Ադրիանա Մարության
Տնօրեն



Մարինե Ավագյան
«Լուսյուր» ՍՊԸ
ներկայացուցիչ

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԴԵԿԱԿԱ ՖՈՆԴ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Ծնթ.	2024թ. հազար դրամ	2023թ. հազար դրամ
Հասույթ		-	-
Վաճառքի ինքնարժեք		-	-
Համախառն շահույթ		-	-
Նվիրատվություններից եկամուտ	11	78,447	-
Ծրագրային ծախսեր	12	(39,060)	-
		39,387	-
Իրացման ծախսեր	13	(6,026)	-
Վարչական ծախսեր	14	(9,755)	-
Այլ ծախսեր		-	-
Այլ եկամուտներ		39	-
Գործառնական գործունեությունից շահույթ (վնաս)		23,645	-
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)		(3)	-
Ֆինանսական եկամուտ		-	-
Շահույթ մինչև հարկումը		23,642	-
Շահութահարկի գծով փոխհատուցում (ծախս)		-	-
Տարվա զուտ շահույթ		23,642	-
Այլ համապարփակ եկամուտներ		-	-
Տարվա համապարփակ արդյունք		23,642	-

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԴԵԿԱԿԱ ՖՈՆԴ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՀԻՄՆԱԴՐԱՄ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	2024թ. հազար դրամ	2023թ. հազար դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շնորհների ստացումից մուտքեր	78,447	-
Գնումների դիմաց վճարումներ	(45,112)	-
Վճարումներ աշխատակիցներին	(5,185)	-
Վճարումներ այլ հարկերի գծով	(1,700)	-
Գործառնական գործունեությունից այլ մուտքեր/(ելքեր)	(381)	-
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	26,069	-
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվներ ձեռք բերման գծով վճարումներ	(7,324)	-
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(7,324)	-
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	-	-
Դրամական միջոցների զուտ հոսքեր	18,745	-
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(3)	-
Դրամական միջոցները տարեսկզբի դրությամբ	-	-
Դրամական միջոցները տարեվերջի դրությամբ	18,742	-

ՍԵՓԱԿԱՆ ԿԱԴԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԴԵԿԱԿՎԱ ՖՈՆԴ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ
Մնացորդն առ 1 հունվարի 2023թ.	-	-	-
Տարվա արդյունք	-	-	-
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2023թ.	-	-	-
Տարվա արդյունք	-	23,642	23,642
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2024թ.	-	23,642	23,642

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԴԷԿԱԿԱ ՖՈՆԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

1. Ընդհանուր տեղեկատվություն

1.1. Նկարագիր և գործունեություն

«ԴԷԿԱԿԱ ՖՈՆԴ» բարեգործական հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) ստեղծվել է 2024թ. հունվարի 26-ին՝ «Կվարտալ Գրուպ» ՍՊ Հիմնադրամի կողմից: Հիմնադրամի ստեղծման հիմքում ընկած է 2023թ. սեպտեմբերի ամսին Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված և Հայաստանի Հանրապետությունում տեղակայված/բնակվող անձանց աջակցելու՝ «Կվարտալ Գրուպ» ՍՊ Հիմնադրամի սոցիալական դիրքորոշումը: Հիմնադրամը հետապնդում է ինչպես Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված, այնպես նաև Հայաստանի Հանրապետությունում բնակվող անձանց սոցիալական, կրթական, առողջական խնդիրների լուծման և այլ հանօգուտ նպատակներ:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Վազգեն Սարգսյան 26/1, որտեղ տեղակայված է Հիմնադրամի վարչական գրասենյակը:

Աշխատակիցների ցուցակային թվաքանակը տարեվերջին կազմել է 1 անձ:

Հիմնադրամի հիմնական նպատակներն են Հայաստանի Հանրապետությունում՝

- առանց ծնողական խնամքի և/կամ առանց ընտանիքի և/կամ կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանությունը,
- առանց ծնողական խնամքի և/կամ առանց ընտանիքի և/կամ կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների՝ կրթության իրավունքի իրացմանն ՀՀ օրենսդրությամբ չարգելված բոլոր հնարավոր միջոցներով աջակցելը,
- ընտանիքներում երեխաների դաստիարակման նպատակով սոցիալ-հոգեբանական մթնոլորտի ձևավորման աջակցությունը,
- առանց ծնողական խնամքի և/կամ առանց ընտանիքի և/կամ կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների համար հնարավորինս ստեղծել ընտանեկանին մոտ միջավայր
- առանց ծնողական խնամքի և/կամ առանց ընտանիքի և/կամ կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների հիմնախնդիրների վերաբերյալ հասարակության տեղեկացվածության բարձրացումը և հասարակության իրազեկումը:

Հիմնադրամի միակ հիմնադիրը «Կվարտալ Գրուպ» ՍՊ ընկերությունն է:

1.2. Կառուցվածք և կառավարում

Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները երեքն են՝

- Արշակ Մաթևոսով (հոգաբարձուների խորհրդի նախագահ)
- Արմեն Ղահրամանյան (հոգաբարձուների խորհրդի անդամ)
- Արտյոմ Հովհաննիսյան (հոգաբարձուների խորհրդի անդամ)

Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը:

2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքները

2.1. Համապատասխանության մասին հայտարարություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ): ՖՀՄՍ-ները Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների հսկողի կողմից ընդունված Ստանդարտները և Մեկնաբանություններն են, որոնք ներառում են.

ա) Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտները (IFRS),

բ) Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտները (IAS), և

գ) Մեկնաբանությունները՝ թողարկված Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների Մեկնաբանությունների Կոմիտեի կողմից:

2.2. Անընդհատության հիմունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքով:

2.3. Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

2.4. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը (այսուհետ՝ Դրամ): Դրամը հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը՝ հազարների ճշտությամբ:

2.5. Դատողությունների, գնահատականների և ենթադրությունների օգտագործում

Սույն ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն պատրաստելու համար Հիմնադրամի ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը և պայմանական ակտիվների և պարտավորությունների բացահայտմանը վերաբերող մի շարք գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից: Գնահատումները և ենթադրությունները վերանայվում են շարունակաբար:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները

3.1. Արտարժույթով գործառնություններ

Արտարժույթով գործառնությունը սկզբնապես ճանաչման պահին հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը:

Որպես սփոթ փոխանակման փոխարժեք ընդունվում է արժույթային շուկայում ձևավորված արտարժույթների միջին փոխարժեքը՝

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	31.12.2024թ.
	ՀՀ դրամ
1 ԱՄՆ դոլար	396.56
1 Եվրո	413.89
1 Ռուբլի	3.71

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին՝

ա) արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը.

բ) սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և

գ) իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

3.2. Հիմնական միջոցներ

Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների հոդվածները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստը:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղակիորեն վերագրելի ծախսումները:

Երբ հիմնական միջոցը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին հոդվածներ (նշանակալի բաղադրիչ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված օգուտը և վնասը ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների հոդվածի բաղկացուցչի փոխարինման ծախսումները ճանաչվում են հոդվածի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Հիմնադրամ և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարելուն պես:

Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ մաշվածության ծախսումները ներառվում են այլ ակտիվի հաշվեկշռային արժեքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է, երբ հիմնական միջոցը մատչելի է օգտագործման համար: Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ ժամանակաշրջանի համար հետևյալն են.

Համակարգչային տեխնիկա 1-3 տարի

Տրանսպորտային միջոցներ 8 տարի

Արտադրատնտեսական գույք 5-8 տարի

Հիմնական միջոցների մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

3.3. Ոչ նյութական ակտիվներ

Ճանաչում և չափում

Հիմնադրամի կողմից ձեռքբերված ոչ նյութական ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված կորուստները:

Ամորտիզացիա

Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ ժամանակաշրջանի համար հետևյալն են.

Ինտերնետային կայք

10 տարի

Այլ

10 տարի

3.4. Պաշարներ

Հիմնադրամը պաշարները չափում է ինքնարժեքով: Ծառայությունների ինքնարժեքը հաշվարկվում է փաստացի կատարված արտադրական ծախսումների հանրագումարով (փաստացի ինքնարժեք):

Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» (ՖԻՖՈ) բանաձևով:

Հիմնադրամը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատում է՝ արդյոք պաշարներն արժեզրկված են, թե՛ ոչ: Եթե պաշարների որևէ հոդված (կամ համանման հոդվածների խումբ) արժեզրկված է, Հիմնադրամը նվազեցնում է պաշարի (կամ խմբի) հաշվեկշռային արժեքը՝ այն հասցնելով դրա վաճառքի գնին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները: Այդ նվազումը արժեզրկումից կորուստն է և անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Վաճառված կամ այլ ձևով հատուցման դիմաց օտարված պաշարների հաշվեկշռային արժեքը ճանաչվում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը:

Պաշարների բոլոր կորուստները ճանաչվում են որպես ծախս ժամանակաշրջանում, երբ առաջացել է կորուստը:

3.5. Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամիը մատուցել է ծառայություն, Հիմնադրամը, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղջված գումարը, որոնք ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղջված գումարը, Հիմնադրամը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և

բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, պաշարների, հիմնական միջոցների դեպքում):

Հիմնադրամը փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է՝

ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ տարեկան արձակուրդը)՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ, և

բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ ժամանակավոր անաշխատունակությունը)՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Հիմնադրամը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափում է որպես լրացուցիչ գումար, որը Հիմնադրամը ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

3.6. Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ

Պահուստը ճանաչվում է, երբ՝

ա) Հիմնադրամն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ

դեպքերի արդյունք.

բ) հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք. և

գ) պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Պայմանական պարտավորությունը և պայմանական ակտիվը չեն ճանաչվում:

Որպես պահուստ ճանաչված գումարը իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար: Զեղչման դրույքը (կամ դրույքները) պետք է լինի այն դրույքը (կամ դրույքները)՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Զեղչման դրույքը չպետք է արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

3.7. Եկամուտներ

Հիմնադրամի եկամուտները գոյանում են անհատույց ստացված գումարներից և շնորհներից:

3.8. Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սխտեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սխտեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

3.9. Շահութահարկի գծով ծախս

Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից:

Ընթացիկ շահութահարկը (հարկը) ընթացիկ ժամանակաշրջանի կամ նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթի գծով վճարման ենթակա հարկ է:

Հետաձգված շահութահարկը (հարկը) ապագա ժամանակաշրջաններում վճարման կամ փոխհատուցման ենթակա հարկ է, որը սովորաբար Հիմնադրամի կողմից իր ակտիվներն ու պարտավորությունները ընթացիկ հաշվեկշռային արժեքով փոխհատուցելու կամ մարելու արդյունք է, ինչպես նաև տվյալ պահին չօգտագործված հարկային վնասները հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հարկային հետևանք: Հիմնադրամը ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթից վճարվելիք հարկի գծով ճանաչում է ընթացիկ հարկային պարտավորություն: Եթե ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար վճարված գումարը գերազանցում է այդ ժամանակաշրջանների համար վճարվելիք գումարը, Հիմնադրամը այդ գերազանցող մասը ճանաչում է որպես ընթացիկ հարկային ակտիվ:

Հիմնադրամը ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունը (ակտիվը) չափում է այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի հարկային

մարմիններին (կփոխհատուցվի հարկային մարմինների կողմից)՝ կիրառելով հարկերի դրույքները և հարկային հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերը, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել մինչև հաշվետու ամսաթիվը:

Հիմնադրամը ընթացիկ հարկային պարտավորության կամ ընթացիկ հարկային ակտիվի փոփոխությունները ճանաչում է շահույթում կամ վնասում՝ որպես հարկի գծով ծախս:

Հիմնադրամը ապագա ժամանակաշրջաններում՝ որպես անցյալ գործարքների կամ դեպքերի արդյունք, փոխհատուցվելիք կամ վճարվելիք հարկի համար ճանաչում է հետաձգված հարկային ակտիվ կամ հետաձգված հարկային պարտավորություն:

Հիմնադրամը հետաձգված հարկային պարտավորության կամ հետաձգված հարկային ակտիվի փոփոխությունները ճանաչում է շահույթում կամ վնասում՝ որպես հարկի գծով ծախս:

Հիմնադրամը ճանաչում է հետաձգված հարկային ակտիվների հետ կապված գնահատման պահուստ այնպես, որ զուտ հաշվեկշռային արժեքը հավասար լինի այն ամենաբարձր գումարին, որը ավելի շատ հավանական է, քան՝ ոչ, որ կփոխհատուցվի ընթացիկ կամ ապագա հարկվող շահույթի հիման վրա:

3.10. Սխալներ

Որքանով իրագործելի է, Հիմնադրամը որևէ նախորդ ժամանակաշրջանի էական սխալները ուղղում է հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում՝

ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդ ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որում տեղի է ունեցել համապատասխան սխալը, կամ

բ) եթե սխալը տեղի է ունեցել մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը՝ ապա վերահաշվարկելով ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները ներկայացված նախորդող ամենավաղ ժամանակաշրջանի համար:

3.11. Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ

Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը փոփոխվում է, երբ պահանջվում է ՖՀՄՍ-ներով, կամ եթե այդ փոփոխությունը նպաստում է տնտեսական գործունեության դեպքերի և գործառնությունների առավել ճշգրիտ ներկայացմանը Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններում:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ չեն համարվում.

ա) հաշվապահական հաշվառման քաղաքականության ընդունումը տնտեսական գործունեության այնպիսի դեպքերի և գործարքների համար, որոնք իրենց բովանդակությամբ տարբերվում են նախորդ տնտեսական գործունեության դեպքերից և գործարքներից,

բ) նոր հաշվապահական հաշվառման քաղաքականության ընդունումը՝ տնտեսական գործունեության դեպքերի և գործարքների համար, որոնք առաջ տեղի չեն ունեցել կամ հանդիսացել են ոչ էական:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը, որը կատարվում է նոր հաշվապահական հաշվառման ստանդարտի ընդունման հետ կապված, կիրառվում է ըստ անցումային դրույթների, եթե այդպիսիք կան տվյալ հաշվապահական հաշվառման ստանդարտում: Անցումային դրույթների բացակայության դեպքում՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը կիրառվում է հետընթաց, քանի դեռ դա իրագործելի է: Յուրաքանչյուր առաջացող ճշգրտում հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվությունում ներկայացվում է որպես չբաշխված շահույթի սկզբնական մնացորդի ճշգրտում: Համեմատելի տեղեկատվությունը վերաներկայացվում է, քանի դեռ դա իրագործելի է:

3.12. Փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխությունները դրանք ակտիվի կամ

պարտավորության հաշվեկշռային արժեքի կամ ակտիվի պարբերաբար սպառվող մեծության ճշգրտումն է, որն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ընթացիկ վիճակի և դրանց հետ կապված ակնկալվող ապագա օգուտների և պարտականությունների գնահատումից: Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններն առաջանում են նոր տեղեկատվության ստացման կամ նոր հանգամանքների առաջացման հետևանքով և, հետևաբար, չեն համարվում սխալների ուղղում: Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը ներառվում է զուտ շահույթի կամ վնասի որոշման մեջ:

ա) փոփոխման ժամանակաշրջանում՝ եթե փոփոխությունն ազդում է միայն հաշվետու ժամանակաշրջանի վրա, կամ

բ) փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունն ազդում է երկուսի վրա էլ:

Այն դեպքերում, երբ դժվար է տարբերակել հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունից, այն դիտվում է որպես հաշվառման գնահատման փոփոխություն:

3.13. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հիմնադրամը ճշգրտում է իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Հիմնադրամը չի ճշգրտում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած չճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

4. Հիմնական միջոցներ

Հազար դրամ

	Համակարգչային տեխնիկա	Տրանսպորտային միջոցներ	Այլ գույք	Ընդամենը
Սկզբնական արժեք				
Առ 01 հունվարի 2023թ.	-	-	-	-
Ավելացումներ	-	-	-	-
Դուրս գրում	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	-	-	-	-
Առ 01 հունվարի 2024թ.	-	-	-	-
Ավելացումներ	175	4,444	78	4,697
Դուրս գրում	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	175	4,444	78	4,697
Մաշվածություն				
Առ 01 հունվարի 2023թ.	-	-	-	-
Տարվա ծախս	-	-	-	-
Դուրս գրված ակտիվների գծով կուտակված մաշվածություն	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	-	-	-	-
Առ 01 հունվարի 2024թ.	-	-	-	-
Տարվա ծախս	116	309	13	438
Դուրս գրված ակտիվների գծով կուտակված մաշվածություն	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	116	309	13	438
Հաշվեկշռային արժեք				
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	59	4,135	65	4,259

5. Ոչ նյութական ակտիվներ

	Հազար դրամ	
	Ինտերնետային կայք	Ընդամենը
Սկզբնական արժեք		
Առ 01 հունվարի 2023թ.	-	-
Ավելացումներ	-	-
Դուրս գրում	-	-
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	-	-
Առ 01 հունվարի 2024թ.	-	-
Ավելացումներ	2,627	2,627
Դուրս գրում	-	-
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	2,627	2,627
Մաշվածություն		
Առ 01 հունվարի 2023թ.	-	-
Տարվա ծախս	-	-
Դուրս գրված ակտիվների գծով կուտակված մաշվածություն	-	-
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	-	-
Առ 01 հունվարի 2024թ.	-	-
Տարվա ծախս	-	-
Դուրս գրված ակտիվների գծով կուտակված մաշվածություն	-	-
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	-	-
Հաշվեկշռային արժեք		
Առ 01 հունվարի 2012թ.	-	-
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	-	-
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	2,627	2,627

6. Պաշարներ

	31.12.2024թ.	31.12.2023թ.
Ապրանքներ	204	-
	204	-

7. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31.12.2024թ.	31.12.2023թ.
Կանխավճար գնումների գծով	300	-
Դեբիտորական պարտքեր պետ. բյուջեի գծով	4	-
	304	-

8. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31.12.2024թ.	31.12.2023թ.
Դրամային բանկային հաշիվներ	18,705	-
Արտարժույթային բանկային հաշիվներ	37	-
	18,742	-

9. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31.12.2024թ.	31.12.2023թ.
Գնումների գծով կրեդիտորական պարտքեր	1,820	-
Հարկերի և պարտադիր վճարների գծով, բացի շահութահարկը	211	-
Աշխատավարձի գծով կրեդիտորական պարտքեր	101	-
	2,132	-

10. Այլ պարտավորություններ

	31.12.2024թ.	31.12.2023թ.
Պահուստ վաստակած արձակուրդայինների գծով	362	-
	362	-

11. Նվիրատվություններից եկամուտ

	2024թ.	2023թ.
Ղահրամանյան Արմեն	77,254	-
Լասկեր Լիմիթեդ ՍՊԸ	600	-
Կվարտալ Գրուպ ՍՊԸ	500	-
Այլ	93	-
	78,447	-

12. Ծրագրային ծախսեր

	2024թ.	2023թ.
Առանց ծնող. խնամքի կամ կյանքի դժվար իրավիճակում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանություն	34,245	-
Առանց ծնող. խնամքի կամ կյանքի դժվար իրավիճակում գտնվող երեխաների կրթությանն աջակցություն	4,034	-
Անուղղակի ծախսեր՝ տրանսպորտային ծախսեր	781	-
	39,060	-

13. Իրացման ծախսեր

	2024թ.	2023թ.
Մարքեթինգի և գովազդի ծախսեր	6,026	-
	6,026	-

14. Վարչական ծախսեր

	2024թ.	2023թ.
Աշխատանքի վարձատրության գծով	7,537	-
Մաշվածություն և ամորտիզացիա	117	-
Ներկայացուցչական	560	-
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	21	-
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	1,300	-
Բանկային ծառայությունների ծախսեր	61	-
Զփոխհատուցվող հարկերից ծախսեր	18	-
Այլ ծախսեր	141	-
	9,755	-

15. Պայմանական դեպքեր և պարտավորվածություններ

Դատական վեճեր

Հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամը ներգրավված չէ դատական գործերում և հայցերում:

Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր մեկնաբանությունների առարկա են:

Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները:

16. Կապակցված կողմերի բացահայտում

Հիմնադրամի կապակցված կողմերը ներառում են հոգաբարձուների խորհրդի անդամները, «Կվարտալ Գրուպ» ՍՊ ընկերությունը և առանցքային ղեկավար անձնակազմը:

16.1 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում հիմնադրամի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները.

	2024թ.
Ստացված նվիրատվություններ (Ղահրամանյան Արմեն)	77,254
Ստացված նվիրատվություններ («Կվարտալ Գրուպ» ՍՊԸ)	500

16.2 Առանցքային կառավարչական անձնակազմի հատուցումներ

Հաշվետու ժամանակաշրջանում Հիմնադրամի առանցքային կառավարչական անձնակազմին տրված հատուցումները հետևյալն են.

	2024թ.
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ փոխհատուցումներ	5,640